ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 09 փետրվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Ֆ.Թոխյանի

Զ.Ղուկասյանի

Քննության առնելով Ռուբեն Թորոսյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

1. Քաղաքացի Ռուբեն Թորոսյանը 19.01.2009թ. դիմել է սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 29 և 38 հոդվածների 2-րդ մասերի, 69 հոդվածի 6-րդ կետի վերջին նախադասության և 10 մասի դրույթների սահմանադրականությունը:

2.Դիմողը միջնորդում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի (ժդ) կետի հիմքով իրեն ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից:

3. Դիմողի համոզմամբ իր նկատմամբ կիրառված ՍԴ կանոնակագը հակասում է Սահմանադրությանը: Դիմողի փաստարկները հանգում են հետևյալին՝.

« 1. Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 29 և 38 հոդվածների 2-րդ մասերի, 69 հոդվածի 6-րդ կետի վերջին նախադասության և 10 մասով սահմանված հարցերի լուծման համար ՍԴ-ի կողմից որևէ ակտի ընդունում ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված չէ:

2. Նմանատիպ ակտը ՀՀ Սահմանադրությամբ սահմանվում է , որպես «կանոնակարգ օրենք»...

3. Բոլոր դատարանների համար, չգիտես ինչու՝ բացառությամբ ՍԴ-ի, դատավարության կարգը, ՀՀ Սահմանադրության 91 և 94 հոդվածների համաձայն, սահմանվում և իրականացվում է օրենքով (համապատասխան օրենսգրքերով)»:

ՀՀ Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով անհատական դիմումին ներկայացվող պահանջներից մեկն էլ օրենքով սահմանված չափով պետական տուրք վճարելն է:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն .«Դիմողի միջնորդության հիման վրա նրան պետական տուրքի վճարումից ազատելու հարցը սահմանադրական դատարանը լուծում է անհատական դիմումը քննության ընդունելու հարցը լուծելու հետ միաժամանակ՝«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

Դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները սահմանված են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածով, որի ժդ) կետի համաձայն պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն ունեն. «դիմողները՝ ընտրելու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով»:

Սահմանադրական դատարան հասցեագրված իր դիմումով քաղաքացի Ռ. Թորոսյանը բարձրացրել է օրենքի դրույթի սահմանադրականության հարց, որի համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22 հոդվածով պետական տուրքի վճարումից ազատում նախատեսված չէ:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27 հոդվածով և ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 25 հոդվածի 2-րդ մասով Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Չբավարարել պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի միջնորդությունը և դիմումի ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ